

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2007 թվականի օգոստոսի 9-ի N 905-Ն որոշման
մեջ փոփոխություններ և լրացում կատարելու
մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« » _____ 2023 թվականի N ____-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N 905-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ ու 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի «Ռազմական դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներից կամ դրանց հետևանքների վերացման գործողություններից տուժած ֆիզիկական անձանց կրած նյութական վնասները փոխհատուցելու և նրանց օգնություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» N 905-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.
- 1) 2-րդ կետում «նպատակով շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների ներկայացուցիչներից ստեղծվում է միջգերատեսչական հանձնաժողով, որի կազմը և գործունեության կանոնակարգը հաստատում է

Հայաստանի Հանրապետության վարչապետը» բառերը փոխարինել
«դիմումները քննարկվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի
2021 թվականի հոկտեմբերի 22-ի N 1197-Ա որոշմամբ ստեղծված
միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ միջգերատեսչական
հանձնաժողով) կողմից՝ սույն կարգի և իր աշխատակարգի համաձայն»
բառերով.

2) 4-րդ կետում

ա. «հանձնաժողովի կանոնակարգով սահմանված կարգով տեղում
ուսումնասիրվում» բառերը փոխարինել «հանձնաժողովն ուսումնասիրում»
բառերով,

բ. «չափը» բառից հետո լրացնել «՝ Հայաստանի Հանրապետության
տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության
պետական գույքի կառավարման կոմիտեի «Գույքի գնահատման և աճուրդի
կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից գնահատված
չափով» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ

Ն. Փաշինյան

2023 թ.

Երևան